PISA Կարողությունների զարգացման ծրագիր

# Հայաստան

Աշակերտների միջազգային գնահատման ծրագիր



OECD
BETTER POLICIES FOR BETTER LIVES

# PISA Կարողությունների զարգացման ծրագիր. ՀԱՅԱՍՏԱՆ

OECD

Այս զեկույցը հաստատվել է ՏՀԶԿ-ի Կրթության և հմտությունների վարչության ղեկավար Անդրեաս Սքլեյչերի կողմից:

Այս աշխատանքը հրապարակվել է ՏՀԶԿ-ի գլխավոր քարտուղարի պատասխանատվության ներքո: Այստեղ արտահայտված կարծիքները և կիրառված փաստարկները անպայմանորեն չեն արտացոլում ՏՀԶԿ անդամ-երկրների պաշտոնական տեսակետները:

Այս փաստաթուղթը և նրանում ներառված որևէ քարտեզ որևէ նախապաշարմունքային/կողմնակալ վերաբերմունք չեն արտահայտում որևէ տարածքի կարգավիճակի ու ինքնիշխանության, միջազգային սահմանների սահմանազատումների և որևէ տարածքի կամ քաղաքի անվան վերաբերյալ:

**Լուսանկարներ՝ © Krakenimages.com/Shutterstock**

Այս աշխատանքի օգտագործումը՝ թվային կամ տպագիր, կարգավորվում է հետևյալ հղմամբ ներկայացված դրույթներով ու պայմաններով՝ http://www.oecd.org/termsandconditions:

# Ճանոթագրություն

Այս զեկույցը պատրաստվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության օժանդակությամբ՝ «Աշակերտների միջազգային գնահատման ծրագրի» (PISA)՝ «Տվյալների կարողունակությունների կառուցման և կրթության ոլորտում որոշումների կայացման գործընթացում տվյալների կիրառելիության բարձրացման (2021-2022)» համաձայնագրով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ միասին:

ՏՀԶԿ-ն պայմանագիր է կնքել Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհրդի (ACER) հետ՝ մշակելու համար «Կարողությունների Զարգացման և Կիրառման Աջակցության» (CBIS) հնարավորությունը PISA-ի մասնակից նոր երկրների համար: Այս զեկույցում ներկայացված Կարողությունների կարիքների ծրագիրը (CBP) աջակցության կարևոր կետերից է: Հայաստանի վերաբերյալ CBP զեկույցը պատրաստել են ACER-ի հետազոտողներ դոկտոր Նաոկո Տաքաշան (գիտաշխատող և Հայաստանի հետ CBIS-ի փոխգործակցության պատասխանատու) և պրն. Էնդրյու Մանիոնը (գիտաշխատող), ինչպես նաև կարևոր ներդրում ունեն դոկտոր Մայքլ Ուարդը՝ քաղաքականության գլխավոր վերլուծաբան, և տիկ. Սոֆի Վէյսեթսը՝ ՏՀԶԿ-ի Կրթության և հմտությունների զարգացման վարչության վերլուծաբան: Հրապարակումը պատրաստվել է ՏՀԶԿ-ի քարտուղարության կողմից՝ մասնավորապես Նոել Գելլերի և Քելլի Մակովեցկու կողմից:

ՏՀԶԿ-ն ու ACER-ն իրենց երախտագիտությունն են հայտնում հետևյալ շահագրգիռ կողմերին, որոնք նպաստել են Հայաստանի և ACER-ի միջև համագործակցային հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև Հայաստանում CBP-ի մեկնարկին: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ Կրթության նախարարություն)՝ տիկին Ժաննա Անդրեասյանին (նախարար), պրն. Արթուր Մարտիրոսյանին (նախարարի տեղակալ միջազգային համագործակցության համակարգման գծով), , պրն. Արկադի Պապոյանին (Արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ), տիկին Սուսաննա Ազատյանին (Հանրակրթության և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ), պրն. Ռոբերտ Ստեփանյանին (Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ), տիկին Վարդենի Ամիրխանյանին (Արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ), տիկին Թամարա Ալեքսանյանին (Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ), Գնահատման և թեստավորման կենտրոնից՝ դոկտոր Արսեն Բաղդասարյանին (փոխտնօրեն և PISA ազգային նախագծի ղեկավար), Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնից՝ պրն. Արտաշես Թորոսյանին (տնօրեն), Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից՝ պրն. Արտակ Պողոսյանին (տնօրեն):

ՏՀԶԿ-ն ու ACER-ն իրենց երախտագիտությունն են հայտնում նաև ազգային փորձագետներ պրն. Ռոբերտ Ստեփանյանին (Կրթության նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ և PISA-ի կառավարման խորհրդի Հայաստանի անդամ), դոկտոր Արսեն Բաղդասարյանին (Գնահատման և թեստավորման կենտրոնի փոխտնօրեն և PISA-ի ազգային նախագծի ղեկավար) և տիկին Թամարա Ալեքսանյանին (Կրթության նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ), ովքեր կարևոր ներդրում են ունեցել CBP-ի այս զեկույցի պատրաստման գործում:

# *Բովանդակություն*

**Ծանոթագրություն** .......... **3**
**Հապավումների ցանկ** .......... **5**
**1 Ներածություն և նախապատմություն** .......... **6**
**2 PISA-2025 ստուգատեսի Կարողությունների զարգացման և կիրառման աջակցություն** .......... **6**
**3 PISA-2025-ում Կարողությունների զարգացման հնարավորություններ** .......... **9**
**4 Հայաստանի համար Կարողությունների զարգացման ծրագիր** .......... **11**
**Հավելված Ա CBIS-ի Կարողությունների կարիքների գնահատման կառուցվածքը** .......... **33**
**Հավելված Բ CBIS Կարողութունների կարիքների գնահատման ցուցանիշներ** .......... **35**

## Գծապատկերներ

Պատկեր 1. CBIS-ի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն մասնակիցներին՝ սկսած 2022 թվականից 7

## Աղյուսակներ

Աղյուսակ 1. PISA-2025-ում Կարողությունների զարգացման 9
Աղյուսակ 2. Բնագիտության կետերի մշակման առցանց աշխատաժողով 11
Աղյուսակ 3. CBIS փորձի փոխանակման վեբինար՝ CBA-ի կիրառման մասին 12
Աղյուսակ 4. Նյութերի հրապարակում NPM-ների 1-ին հանդիպումից առաջ 13
Աղյուսակ 5. NPM-ների 1-ին հանդիպումից առաջ նյութերի տարածմանը հաջորդող՝ CBIS-ի աշխատաժողով 14
Աղյուսակ 6. Նոր NPM-ների հանդիպում 15
Աղյուսակ 7. NPM-ների 1-ին հանդիպում 16
Աղյուսակ 8. CBIS Փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ 18
Աղյուսակ 9. CBIS աշխատաժողով՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ 19
Աղյուսակ 10. Նյութերի հրապարակում NPM-ների 2-րդ հանդիպումից առաջ 20
Աղյուսակ 11. NPM-ների 2-րդ հանդիպում 21
Աղյուսակ 12. Փորձնական ստուգատեսի (փորձնական ստուգատեսի) միջազգային վերապատրաստման հանդիպում 22
Աղյուսակ 13. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ 23
Աղյուսակ 14. CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ 24
Աղյուսակ 15. CBIS-ի շրջանակներում մասնագիտական կողավորման հետագա վերապատրաստում 25
Աղյուսակ 16. Նյութերի հրապարակում NPM-ների 3-րդ հանդիպումից առաջ 26
Աղյուսակ 17. NPM-ների 3-րդ հանդիպում 27
Աղյուսակ 18. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ 28
Աղյուսակ 19. CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ 29
Աղյուսակ 20. Հիմնական հետազոտության միջազգային ուսումնական հանդիպում 30
Աղյուսակ 21. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման վեբինար՝ շահագրգիռ կողմերի ներգարվվածության վերաբերյալ՝ օգտագործելով PISA-ի տվյալները 31
Աղյուսակ 22. Վերլուծություն և Զեկուցում գործընկերության այլընտրանք 32

Աղյուսակ A B.1. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՁԵՌՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ 35
Աղյուսակ A B.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ 36
Աղյուսակ A B.3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ 38

# *Հապավումների ցանկ*

| | |
|---|---|
| A&R | Վերլուծություն և զեկույցների կազմում |
| ACER | Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհուրդ |
| ATC | Գնահատման և թեստավորման կենտրոն |
| CBA | Համակարգչային գնահատում |
| CBIS | Կարողությունների զարգացման և կիրառման աջակցություն |
| CBP | Կարողությունների զարգացման ծրագիր |
| CNA | Կարողությունների կարիքների գնահատում |
| NC | Ազգային կենտրոն |
| NCQM | Ազգային կենտրոնի որակի վերահսկում |
| NDM | Ազգային տվյալների ղեկավար |
| NPM | Նախագծի ազգային ղեկավար |
| NSM | Ընտրանքի ազգային ղեկավար |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| PBA | Թղթային եղանակով գնահատում |
| PIP | Նախագծի իրականացման ծրագիր |
| PISA | Աշակերտների միջազգային գնահատման ծրագիր |

## 1 Ներածություն և նախապատմություն

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Աշակերտների միջազգային գնահատման ծրագիրը» (PISA) աշխարհում ուսումնառության գնահատման միջազգային ամենախոշոր ծրագիրն է: PISA-ն ստուգում է 15 տարեկան աշակերտների՝ իրական կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում: PISA-ն ներկայացնում է ուսումնառության արդյունքների միջազգային չափանիշ՝ բենչմարք, որը հնարավորություն է տալիս կրթության ոլորտում փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնել: PISA-2025-ը PISA-ի 9-րդ ստուգատեսն է, որն անցկացվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ 2000 թվականից սկսած:[1] PISA-2025 ստուգատեսի ուշադրության կենտրոնում գիտությունն է, գնահատումը ներառում է նաև «Ուսուցումը թվային աշխարհում» նորարարական ոլորտը: Այն նպատակ ունի ստուգել աշակերտների՝ ուսումնառության ընթացքում թվային գործիքներից ինքնուրույն օգտվելու հմտությունները:[2] Պայմանագրի կողմերի ընդհանուր կառավարումը, PISA-2025 ստուգատեսի անցկացումը, ինչպես նաև նորարարական ոլորտի համար գործիքների մշակումը իրականացվում է Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհրդի (ACER) կողմից: Պայմանագրի կողմերից են նաև Oxford University Press-ը՝ գիտության կառուցվածքային զարգացման հարցերով, և Westat-ը՝ ընտրանքի որոշման աշխատանքների մասով:

## 2 PISA-2025 ստուգատեսի Կարողությունների զարգացման և կիրառման աջակցություն

Բարձրորակ տվյալներ ապահովող լայնածավալ գնահատման անցկացումը, այնուհետև այդ տվյալների օգտագործումը փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու համար դժվարին աշխատանք է ցանկացած կրթական համակարգի համար: Թեև PISA-ն մասնակիցներին առաջարկում է կարողությունների զարգացման մի շարք հնարավորություններ, դրանցից օգտվելը կարող է դժվար լինել նոր մասնակիցների համար: Հետևաբար, կարողությունների զարգացումը ցանկացած PISA շրջանի անբաժանելի մասն է կազմում:

Հիմք ընդունելով PISA Զարգացման ծրագրում [3]և PISA 2022-ում աջակցության ծրագրի փորձը, որն անցկացվել է երկրի մակարդակով ծրագրի պատրաստության և իրականացման աջակցության տարբերակով, PISA-2025 ստուգատեսը նոր մասնակիցներին առաջարկում է «Կարողությունների զարգացման և կիրառման աջակցության» (CBIS) հնարավորություն: CBIS-ը նպատակ ունի նոր մասնակիցներին անհատական և թիրախային աջակցություն ցուցաբերել, որպեսզի նրանք հաջողությամբ իրականացնեն PISA-2025 ստուգատեսը: CBIS նախագիծն իրականացվում է ACER-ի կողմից:

CBIS նախագիծը բաղկացած է հետևյալ հինգ մասերից՝

- Պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն,

[1] Բացառությամբ PISA 2022 ստուգատեսի, որն անցկացվեց PISA 2018 ստուգատեսից չորս տարի անց՝ COVID-19 համավարակի պատճառով:

[2] www.oecd.org/pisa/innovation/learning-digital-world/

[3] www.oecd.org/pisa/pisa-for-development/

- CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի միջոցով իրականացվող աջակցություն,
- Տվյալ երկիր այցելություն,
- Փորձի փոխանակում,
- Ծրագրի իրականացման հետ կապված աջակցություն:

Պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցությունը ներառում է նյութեր, գործիքներ և աշխատանքներ, որոնց նպատակն է աջակցել մասնակիցներին՝ PISA-2025 ստուգատեսին նախապատրաստվելու: Այս մասի հիմնական բաղադրիչներն են՝ «Կարողությունների կարիքների գնահատում», «Կարողությունների զարգացման ծրագիր», «Նախագծի իրականացման ծրագիր» (տե՛ս Պատկեր 1):

### Պատկեր 1. CBIS-ի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն մասնակիցներին՝ սկսած 2022 թվականից




## 2.1. Կարողությունների կարիքների գնահատում (CNA)

CBIS-ի նախնական փուլում անցկացվում է CNA՝ գնահատելու համար CBIS-ի մասնակիցների՝ PISA ստուգատեսն իրականացնելու կարողությունը: Գնահատումը հիմնականում կենտրոնանում է CBIS-ի Ազգային նախագծի ղեկավարների (NPMs) և Ազգային կենտրոնի (NC) գլխավոր պաշտոնատար անձանց վրա՝ նպատակ ունենալով տեղեկանալու PISA-ն հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ նրանց կարողության ուժեղ կողմերի ու կարիքների մասին: CNA-ի արդյունքները ներկայացված են համառոտ զեկույցի մեջ, որտեղ շեշտվում են կարողությունների զարգացման ոլորտները, որն իր հերթին կօգնի Ազգային կենտրոնին (NC) պատշաճ կերպով բաշխել ռեսուրսները և կենտրոնանալ կարողությունների զարգացման վրա, որտեղ անհրաժեշտ է: CNA-ի համար օգտագործված կառուցվածքն ու ցուցանիշները ներկայացված են Հավելված Ա -ում և Հավելված Բ-ում:

Գնահատման չափանիշներ են սահմանվել յուրաքանչյուր ցուցանիշի ընդգրկույթի համար՝ գնահատման գործընթացին աջակցելու և կարողությունների ուժեղ կողմերն ու կարիքները բացահայտելու նպատակով: Առանձնանում են երեք չափանիշներ՝

- Չնչին (Լատենտ). կարողությունը քիչ է կամ բացակայում է (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զգալի զարգացում,
- Կազմավորվող. առկա են որոշակի կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զարգացում,
- Կազմավորված. առկա են բավարար կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում), կարողությունների զարգացումը պարտադիր չէ:

## 2.2. Կարողությունների զարգացման ծրագիր (CBP)

CBP-ն նախատեսված է CBIS-ի մասնակիցների համար և նպատակ ունի օգնել նրանց զարգացնելու իրենց կարողությունները՝ PISA ստուգատեսն իրականացնելու համար: CBP-ում ներկայացված են կարողությունների զարգացման այն բոլոր հնարավորությունները, որոնք առաջարկվելու են PISA-ի մասնակիցներին PISA-2025 ստուգատեսի ժամանակ, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք նախատեսված են հատուկ CBIS-ի մասնակիցների համար՝ համաձայն CNA-ում բացահայտված կարիքների: CBP-ում ներառված են PISA-ի հանդիպումների, վերապատրաստման դասընթացների և CBIS-ին հատուկ աշխատանքների վերաբերյալ մանրամասներ:

## 2.3. Նախագծի իրականացման ծրագիր (PIP)

PIP-ը ռեսուրսների և գործիքների հավաքածու է, որի նպատակն է օգնել CBIS-ի մասնակիցներին PISA-2025 ստուգատեսի նախապատրաստական և իրականացման աշխատանքներում: PIP-ի ժամանակացույցը, որը PIP-ի գլխավոր առանձնահատկությունն է, գործիք է, որտեղ գրանցված են այն բոլոր առաջադրանքները, որոնք PISA NC-ները պետք է կատարեն՝ ըստ որոշված ժամանակացույցի: CBIS-ի մասնակիցներին աջակցություն է տրամադրվում, որպեսզի PIP-ի ժամանակացույցը հարմարեցնեն իրենց երկրի պահանջներին և համատեքստին: PIP-ի ժամանակացույցը շարունակաբար թարմացվում է PISA-2025 ստուգատեսի իրականացման ողջ ընթացքում և օգտագործվում է որպես համապարփակ պլանավորման և մոնիթորինգի գործիք:

Այս զեկույցում ներկայացված է Հայաստանի CBP-ն:

## 3 PISA-2025-ում Կարողությունների զարգացման հնարավորություններ

Ինչպես PISA-ի բոլոր ստուգատեսների, այնպես էլ PISA-2025-ի ամբողջ ընթացքում առաջարկվում են կարողությունների զարգացման մի շարք հնարավորություններ: Այս հնարավորություններն իրենց ժամկետներով, ձևաչափով, տեղայնությամբ և թիրախային մասնակիցներով թվարկված են Աղյուսակ 1-ում: CBIS մասնակիցների համար մատուցված հնարավորություններն ընդգծված են բաց կապույտ գույնով: Կան նաև PISA-ի բոլոր մասնակիցների համար հասանելի հնարավորություններ:

CBIS-ին հատուկ հնարավորություններից է փորձի փոխանակումը: Ավելի ուշ փուլերում կարելի է կազմակերպել հավելյալ փորձի փոխանակման աշխատանքներ․ երբ փորձի փոխանակման գործակիցները նույնացվեն և նրանց մասնակցելու հնարավորությունը հաստատվի: Փորձի փոխանակման որոշ աշխտանքներ կարելի է անցկացնել դեմ առ դեմ, իսկ որոշները՝ առցանց՝ առկա հարմարություններին և ֆինանսավորմանը համապատասխան:

Աղյուսակում թվարկված բոլոր աշխատանքների ժամկետներն ու վայրերը ներկայացված են CBP-ը պատրաստելու պահի դրությամբ: Սակայն, չնախատեսված հանգամանքների դեպքում դրանք կարող են փոխվել: Այդ դեպքում, PISA Ազգային կենտրոններին կտրվի հնարավորին չափ վաղ նախազգուշացում:

### Աղյուսակ 1. PISA-2025-ում Կարողությունների զարգացման

| # | Ժամկետներ | Հանդիպումներ/Վերապատրաստումներ/Աշխատաժողովներ/Ռեսուրսներ | Վայր | Թիրախային մասնակիցներ |
|---|---|---|---|---|
| 1 | 2022 թվականի օգոստոս - նոյեմբեր | Բնագիտության նյութերի մշակման առցանց աշխատաժողով | Առցանց | Թեստեր մշակող |
| 2 | 2023 թվականի հունվարի 23 | CBIS փորձի փոխանակման վեբինար՝ համակարգչային գնահատման (CBA) կիրառման մասին | Առցանց | CBIS NPM, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| 3 | 2023 թվականի փետրվար | Նյութերի հրապարակում NPM-ների 1-ին հանդիպումից առաջ | Առցանց | NPM, Գնահատման գործիքների համակարգող, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| 4 | 2023 թվականի փետրվար | NPM հանդիպում 1-ից առաջ նյութերի արձակման հաջորդող CBIS աշխատաժողով | Առցանց | CBIS NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| 5 | 2023 մարտ | Նոր NPM-ների հանդիպում | Լիսբոն, Պորտուգալիա | Նոր NPM, ներառյալ՝ CBIS NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| 6 | 2023 մարտ | NPM-ների 1-ին հանդիպում | Լիսբոն, Պորտուգալիա | NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| 7 | 2023 մարտ | CBIS Փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ | Լիսբոն, Պորտուգալիա | CBIS NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| 8 | 2023 մարտ | CBIS աշխատաժողով՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ | Լիսբոն, Պորտուգալիա | CBIS NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| 9 | 2023 թվականի հոկտեմբեր | Նյութերի հրապարակում NPM-ների 2-րդ հանդիպումից առաջ | Առցանց | NPM, Ընտրանքի ազգային ղեկավար (NSM), Տվյալների ազգային ղեկավար (NDM), Գնահատման գործիքների համակարգող, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| 10 | Հունվար 2024 | NPM-ների 2-րդ հանդիպում | Բանգկոկ, Թայլանդ | NPM, NSM |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Փետրվար 2024 | Փորձնական ստուգատեսի անցկացման միջազգային վերապատրաստում | Բանգկոկ, Թայլանդ | Ազգային կողավորողներ պատրաստողներ, NDM |
| 12 | Հունվ./Փետ. 2024 | CBIS փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ | Բանգկոկ, Թայլանդ | CBIS NPM, NDM |
| 13 | Հունվ./Փետ. 2024 | CBIS աշխատաժողով՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ | Բանգկոկ, Թայլանդ | CBIS NPM, NDM |
| 14 | 2024 թվականի սկիզբը | Զբաղմունքների կոդավորման վերապատրաստում՝ CBIS-ին հաջորդող | Առցանց | CBIS NPM |
| 15 | 2024 թվականի հոկտեմբեր | Նյութերի հրապարակում NPM-ների 3-րդ հանդիպումից առաջ | Առցանց | NPM, Տվյալների վերլուծաբան, NSM, NDM, Ազգային կողավորող պատրաստողներ, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| 16 | 2024 թվականի նոյեմբեր | NPM-ների 3-րդ հանդիպում | Սիդնեյ, Ավստրալիա | NPM (այլ թիրախային մասնակիցներ. ենթակա է հաստատման) |
| 17 | 2024 թվականի նոյեմբեր | CBIS փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ | Սիդնեյ, Ավստրալիա | CBIS NPM (այլ թիրախային մասնակիցներ. ենթակա է հաստատման) |
| 18 | 2024 թվականի նոյեմբեր | CBIS աշխատաժողով՝ NPM հանդիպում 3-ի ժամանակ | Սիդնեյ, Ավստրալիա | CBIS NPM (այլ թիրախային մասնակիցներ. ենթակա է հաստատման) |
| 19 | 2025 թվականի հունվար | Հիմնական ստուգատեսի անցկացմանմիջազգային վերապատրաստում | Առցանց | Ազգային կողավորող պատրաստողներ, NDM |
| 20 | Հիմնական ստուգատեսից հետո ազգային տվյալների ներկայացնում | CBIS փորձի փոխանակման վերհնար PISA տվյալների օգտագործման վերաբերյալ՝ շահառուների ներգրավվածությունը խթանելու համար | Առցանց | CBIS NPM, Տվյալների վերլուծաբան |
| 21 | 2026 թվականի ապրիլ - դեկտեմբեր | Վերլուծությունների և զեկույցի կազմման շրջանակում գործընկերության հնարավորություն | Փարիզ, Ֆրանսիա | PISA մասնակիցներից առաջատար վերլուծաբաններ |

## 4 Հայաստանի համար Կարողությունների զարգացման ծրագիր

Այս բաժնում ներկայացված են Աղյուսակ 2-ում թվարկված յուրաքանչյուր կարողությունների զարգացման հնարավորությունների մանրամասները: Տվյալները ներկայացված են աղյուսակի տեսքով, որում նշված են անվանումը, ժամկետը, վայրը, կարողությունների զարգացման նպատակը, թիրախային մասնակիցները, ակնկալվող արդյունքները, մասնակիցների պատասխանատվությունները, վարչական մանրամասներ, առնչվող փաստաթղթերը, ծախսերը և գործին վերաբերող CNA ցուցանիշներ: Մանրամասների մեջ նաև նկարագրվում է, թե ինչպես CNA-ի զեկույցում բացահայտված՝ Հայաստանին հատուկ կարողությունների զարգացման կարիքները կարելի է բավարարել կարողությունների զարգացման հնարավորությունների միջոցով:

Յուրաքանչյուր աղյուսակին առընթեր կա ժամանակագիծ, որում նշված է թե PISA-2025 (2023-2026) շրջանի տևողության որ թվականին տեղի կունենա կարողությունների զարգացման առիթը: Բնագիտության նյութերի մշակման առցանց աշխատաժողովը բացառություն է, քանի որ այն տեղի է ունեցել վերոհիշյալ շրջանից առաջ:

### Աղյուսակ 2. Բնագիտության կետերի մշակման առցանց աշխատաժողով

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն | |
|---|---|---|
| Անվանում | Բնագիտության կետերի մշակման առցանց աշխատաժողով | |
| Ժամկետ | Օգոստոս - Նոյեմբեր 2022 | |
| Վայր | Առցանց | |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ բնագիտության գնահատման նպատակներ մշակել, որոնք համապատասխանում են PISA-2025 բնագիտության գնահատման շրջանակին | |
| Թիրախային մասնակիցներ | Քննության նյութեր մշակողներ | |
| Կոնկրետ արդյունքներ | Աշխատաժողովը PISA-ի բնագիտության նյութերի մշակման աշխատաժողովների առցանց տարբերակն էր: Դրանք անցկացվեցին 2022 թվականի հունիսին և հուլիսին՝ Վիեննայում և Սիդնեյում համապատասխանաբար: Առցանց տարբերակը նախատեսված էր այն մասնակիցների համար, ովքեր հնարավորություն չունեին աշխատաժողովներից որևէ մեկին անձամբ ներկա լինելու:<br>Առցանց աշխատաժողովում ներկայացված էին օֆլայն աշխատաժողովին ցուցադրված սահիկաշարերը, ինչպես նաև աշխատանքների և աջակցության նյութերի պատճեններ: Այն չի փոխարինել դեմ-առ-դեմ ներկայությամբ աշխատաժողովներին, սակայն ընդհանուր գիտելիքներ է փոխանցել հասկացողությունների և մշակված հմտությունների մասին: | |
| Մասնակիցների պատասխանատվություններ | • Դիտել աշխատաժողովի նյութերը<br>• Գործնական աշխատանքները կատարել ինքնուրույն ուսուցման մեթոդով | |
| Ադմինիստրատիվ մանրամասներ | • PISA-ի՝ հետաքրքրություն ցուցաբերած մասնակիցներին տրվել է տեղեկության հասանելիություն<br>• Աշխատաժողովի նյութերը՝ որպես կարողությունների զարգացման աղբյուր, հասանելի կլինեն երկարացված ժամկետով | |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | Գործին վերաբերող փաստաթղթերը ներկայացվեցին աշխատաժողովի ժամանակ | |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ | |
| Տվյալ երկրում ծախս | 0 EUR | |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | O7 Գործիքների մշակում (կազմավորված) | I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | PISA Ազգային Կենտրոնի վայր՝ Հայաստանի Գնահատման և Թեստավորման Կենտրոնում (ATC) քննության նյութեր մշակողների համար աշխատաժողովի նյութերը հասանելի են եղել: Աշխատաժողովը նրանց օգնեց ծանոթանալու PISA-ի կողմից նյութերի մշակման գործընթացին: | |

| | |
|---|---|
| | Աշխատաժողովը Հայաստանի անձնակազմին կօժանդակի բարելավելու իրենց գնահատման համակարգի մշակման փորձառությունը և կատարելագործել նյութերի մշակման որակի ապահովման գործընթացները: Այն նաև ավելի լայն ընկալունակություն կընձեռի PISA-ի բնագիտության նյութերի յուրաքանչյուր բաղադրիչի առկայության պատճառի ու նպատակի մասին, որն իր հերթին կբարելավի գործիքի զարգացման գործընթացները, ինչպիսիք են նյութերի թարգմանությունն ու հարմարեցումը/տեղայնացումը: |

## Աղյուսակ 3. CBIS փորձի փոխանակման վեբինար՝ CBA-ի կիրառման մասին

PISA-2025 Ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային Զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS փորձի փոխանակման վեբինար՝ CBA-ի կիրառման մասին |
| Ժամկետ | 2023 թվականի հունվարի 23 (1,5 ժամ) |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| Կարողությունների զարգացման նպատակ | Փորձի փոխանակմամբ գործընկերոջից սովորել, թե ինչպես PISA-ում առաջին անգամ անցկացնել CBA |
| Կոնկրետ արդյունքներ | • Օրակարգ<br>• Փորձի փոխանակման գործընկերոջ շնորհանդես(ներ)<br>• Վեբինարի ընթացքում արծարծված գլխավոր կետերի արձանագրություն<br>• Մասնակիցների ցանկ |
| Մասնակիցների պատասխանատվություններ | Փորձի փոխանակման վեբինարի ժամանակ արծարծվելիք հարցեր/նյութեր պատրաստել |
| Ադմինիստրատիվ մանրամասներ | CBIS փոխգործակցության պատասխանատուն ՏՀԶԿ-ի հետ միասին կհարմարեցնի փորձի փոխանակման վեբինարի անցկացման ժամանակը: |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | PISA-2025 NPM և Ազգային կենտրոնի աշխատակազմի պաշտոններն ու պատասխանատվությունների շրջանակը |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | 0 EUR |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O5 SS ենթակառուցվածք և աջակցություն (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br><br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I7 Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Քանի որ Հայաստանը մտադրված է ընտրելու CBA անցկացման ձևաչափը, փորձի փոխանակման վեբինարը նրանց կօգնի ճիշտ կողմնորոշվել ձևաչափի վերաբերյալ: Վեբինարը կարող է հատկապես օժանդակել...<br>• CBA-ի ամբողջական պատկերը ընկալելու,<br>• Անցկացման ձևաչափի հետ կապված առավելություններն ու խնդիրները բացահայտելու,<br>• Խնդիրների լուծումները պլանավորելու,<br>• Անհրաժեշտ նյութերը որոշելու հարցերում: |

## Աղյուսակ 4. Նյութերի հրապարակում NPM-ների 1-ին հանդիպումից առաջ

PISA-2025 Ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային Զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Նյութերի հրապարակում NPM-ների 1-ին հանդիպումից առաջ |
| Ժամկետ | 2023 թվականի փետրվար |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | NPM, Գնահատման գործիքների համակարգող, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| Կարողությունների զարգացման նպատակ | PISA-ի ամբողջական պատկերը ընկալել՝ որպես նախապատրաստություն NPM-ների 1-ին հանդիպումից առաջ |
| Կոնկրետ արդյունքներ | • NPM-ների 1-ին հանդիպման թեմաներին վերաբերող նյութեր․ կհրապարակվեն տարբեր ձևաչափերով՝<br>○ Փաստաթղթեր,<br>○ Շնորհանդես (կենդանի կամ նախօրոք տեսագրված),<br>○ Վեբինար,<br>○ Աշխատաժողով:<br>• Ըստ կարիքի՝ վիրտուալ խորհրդակցություններ կկազմակերպվեն պայմանագրի կողմերի հետ: |
| Մասնակիցների պատասխանատվություններ | • Նյութերը դիտել,<br>• Ըստ կարիքի՝ շնորհանդեսներին, աշխատաժողովներին և խորհրդակցություններին ներկա գտնվել: |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | NPM-ների 1-ին հանդիպումից չորս շաբաթ առաջ նյութերը կհրապարակվեն PISA Connect հարթակում |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM-ների 1-ին հանդիպում օրակարգի նախագիծ |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | 0 EUR |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | NPM-ների 1-ին հանդիպմանն ընդառաջ հրապարակված նյութերը առիթ կընձեռեն Հայաստանում անձնակազմի լայն շրջանակին՝ ծանոթանալու NPM-ների 1-ին հանդիպման ընթացքին օգտագործվելիք նյութերին, և Հայաստանի համատեքստին վերաբերող հարցեր տալու:<br>ATC-ն արժեքավոր փորձ է ձեռք բերել ազգային և միջազգային լայնածավալ գնահատումներ անցկացնելու գործում: Համենայն դեպս, որոշ ոլորտներ (օրինակ՝ ընտրանքի ձևավորում, լեզվական որակի վերահսկում, վերլուծություն և զեկուցում), կարող են դժվարություններ առաջացնել, քանի որ PISA-ի որոշ մեթոդներ և ընթացակարգեր տարբեր են և ավելի բարդ՝ համեմատած այլ միջազգային լայնածավալ գնահատումների հետ: |

## Աղյուսակ 5. NPM-ների 1-ին հանդիպումից առաջ նյութերի տարածմանը հաջորդող՝ CBIS-ի աշխատաժողով




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | NPM-ների 1-ին հանդիպումից առաջ նյութերի տարածմանը հաջորդող՝ CBIS աշխատաժողով |
| Ժամկետ | 2023 թվականի փետրվար (2 ժամ) |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM-ներ, Գնահատման գործիքների համակարգող |
| Կարողությունների զարգացման նպատակ | • NPM հանդիպում 1-ի նպատակն ու աշխատանքները հասկանալ<br>• PISA Ազգային Կենտրոնի առկայությունը/ձևավորումը հաստատել<br>• Տեղեկացվածության վրա հիմնված որոշումներ կայացնելու նպատակով (եթե այդպիսի որոշում դեռևս չի կայացվել)՝ հասկանալ համակարգչային և թղթային եղանակներով գնահատման մեթոդների միջև տարբերությունները |
| Կոնկրետ արդյունքներ | • Աշխատաժողովի օրակարգ,<br>• Աշխատաժողովի նյութեր.<br>  ○ Ազգային Կենտրոնի կազմի մասին,<br>  ○ Գնահատման անցկացման մեթոդների վերաբերյալ ընդհանուր տեղեկություն,<br>• Աշխատաժողովի արձանագրություն՝ մասնակիցների ցանկով: |
| Մասնակիցների պատասխանատվություններ | Աշխատաժողովին մասնակցելուց առաջ դիտել աշխատաժողովի նյութերը |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | Աշխատաժողովը կանցկացվի NPM հանդիպում 1-ի նյութերի արձակումից հետո |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM հանդիպում 1-ի օրակարգ և նյութեր |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | 0 EUR |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ CBIS-ի աշխատաժողովը կենտրոնանալու է PISA գնահատման մեթոդների այլընտրանքների վրա: Մասնակիցներին տեղեկատվության հիման վրա որոշում կայացնելու առիթ ընձեռելու նպատակով, բացատրվելուեն CBA-ն ընդդեմ PBA-ի անցկացման մեթոդների գնահատման նյութերի, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի, ինչպես նաև դպրոցական մակարդակում անհրաժեշտ մանրամասների տարբերությունները:<br>Հաշվի առնելով, որ Հայաստանը ծրագրում է մասնակցել CBA մեթոդով անցկացմամբ, անհրաժեշտ կլինեն ավելի բարդ ուսումնասիրությունների և լոգիստիկայի ապահովում: Օրինակ՝ երաշխավորել, որ PISA-ի մասնակից բոլոր դպրոցներն ունենան բավարար քանակով և պատշաճ համակարգիչներ, (ներառյալ սահմանամերձ շրջանների դպրոցները), կարող է դժվար լինել: Բացի այդ, քննություն վարողների որակավորումը ավելի բարդ է լինելու CBA-ի քան թե PBA-ի համար: Նաև հարկավոր է լավ պլանավորել խնդիրների լուծման ընթացակարգերը՝ քննության անցկացման ժամանակ: CBA-ի ուսումնասիրության գործողությունների ստանդարտացման, մոնիթորինգի ու փաստագրման որակի երաշխավորման մեխանիզմներ ծրագրելու համար պահանջվելու են որոշակի կարողություններ: |

## Աղյուսակ 6. Նոր NPM-ների հանդիպում




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Նոր NPM հանդիպում |
| Ժամկետ | 2023 թվականի մարտի 12 (1 օր) |
| Վայր | Լիսբոն, Պորտուգալիա |
| Թիրախային մասնակիցներ | Նոր NPM-ներ, ներառյալ՝ CBIS NPM-ներ |
| Կարողությունների զարգացման նպատակ | NPM-ների 1-ին հանդիպմանը լիովին մասնակցելու պատրաստության համար՝ PISA-2025-ի գլխավոր բնութագրերը հիմնավորող հասկացությունները հասկանալը |
| Կոնկրետ արդյունքներ | • Օրակարգ,<br>• PISA-2025-ի հետևյալ բնութագրիչների մասին ներկայացումներ և քննարկումներ՝<br>  ○ PISA-2025-ի ակնարկ,<br>  ○ PISA-ի տեխնիկական ստանդարտներ<br>  ○ Ժամանակացույց և պատասխանատվություններ,<br>  ○ Թարգմանություն, հարմարեցում և վավերացում: |
| Մասնակիցների պատասխանատվություններ | Հանդիպումից առաջ հանդիպման նյութերը տեսնել |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | Նոր NPM-ի ժողովը տեղի կունենա NPM-ների 1-ին հանդիպումից մեկ օր առաջ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • PISA-2025-ի տեխնիկական ստանդարտներ,<br>• PISA-2025-ի NPM-ների ուղեցույց,<br>• NPM-ների 1-ին հանդիպման օրակարգ և նյութեր: |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | Տես NPM հանդիպում 1-ի տվյալ երկրում ծախս |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Նոր NPM-ների համար ժողովը Հայաստանի NPM-ներին կարևոր հնարավորություն կընձեռի PISA-ի տեխնիկական ասպեկտների մասին ընդհանուր պատկերը ունենալու և PISA-2025 ստուգատեսի այլ NPM-ների հետ հանդիպելու: Այս կապերը տեղեկություն փոխանակելու, հետագայում առաջացող խնդիրներ լուծելու կարևոր միջոցներ կարող են լինել: |

## Աղյուսակ 7. NPM-ների 1-ին հանդիպում

PISA-2025 Ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային Զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | NPM-ների 1-ին հանդիպում |
| Ժամկետ | 2023 թվականի մարտի 13-17 (4,5 օր) |
| Վայր | Լիսբոն, Պորտուգալիա |
| Թիրախային մասնակիցներ | NPM-ներ, Գնահատման գործիքների համակարգող |
| Կարողությունների զարգացման նպատակ | PISA-2025-ի փորձնական ստուգատեսը կարողանալ  պլանավորել և նախապատրաստել՝ հասկանալով դրա հետ կապված աշխատանքների մանրամասները |
| Կոնկրետ արդյունքներ | • Օրակարգ,<br>• PISA-2025-ի հետևյալ ասպեկտների մասին ներկայացումներ և աշխատաժողովներ՝<br>   ○ Կառուցվածքներ (գիտություն, Կյանքը Թվային Աշխարհում, հարցարան)<br>   ○ Ինտեգրված նախագիծ և հարմարեցվող քննում,<br>   ○ Փորձնական ստուգատեսի գնահատման գործիքներ,<br>   ○ PISA-ի տեխնիկական ստանդարտներ,<br>   ○ Գնահատման հարթակ,<br>   ○ Թարգմանություն, հարմարեցում և վավերացում,<br>   ○ Ուսումնասիրություններ,<br>• Ըստ կարիքի՝ անհատական խորհրդակցություններ կկազմակերպվեն պայմանագրերի կողմերի հետ: |
| Մասնակիցների պատասխանատվություններ | • Նախքան հանդիպումը՝ հրապարակված գործին վերաբերող նյութերը տեսնել,<br>• Ըստ կարիքի՝ շնորհանդեսներին, աշխատաժողովներին և խորհրդակցություններին ներկա գտնվել: |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | • Հանդիպմանը կարող են մասնակցել յուրաքանչյուր մասնակից երկրից առավելագույնը երկու պատվիրակ: Ակնկալվում է, որ մասնակցեն NPM-ը և Ազգային Կենտրոնի թարգմանության, հարմարեցման և վավերացման պատասխանատու անձը:<br>• Հանդիպման հրավերը կուղարկվի և գրանցումը կբացվի հանդիպումից 3 ամիս առաջ: |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • PISA-2025-ի տեխնիկական ստանդարտներ<br>• Թարգմանության և հարմարեցման ուղեցույցներ<br>• Նյութերը հրապարակվում են հանդիպումից 4 շաբաթ առաջ |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | Պատվիրակների տրանսպորտի, կեցություն, սննդի, չնախատեսված և ճամփորդության հետ կապված այլ ծախսեր |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն (Կազմավորված՝ PBA-ի դեպքում, և կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O7 Գործիքների մշակում (կազմավորված)<br>• O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն (կազմավորվող)<br>• O10  Ուսումնասիրություններ և լոգիստիկա  (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Հանդիպմանը արծարծվելու են PISA-ի այն բոլոր կողմերը, որոնք ժամանակագծի այս հատվածի համար նշանակություն ունեն: Առիթ կընձեռի, որ NPM-ները ընդհանուր գաղափար կազմեն կատարվելիք աշխատանքների մասին, բարելավեն պահանջների մասին իրենց իմացությունը, կարողանան պատշաճ ռեսուրսներ և ժամանակ հատկացնել աշխատանքներին, և առիթ ունենան ուրիշ մասնակիցների և փորձագետների խորհուրդն ստանալ:<br>Սա կարևոր առիթ կլինի՝ Հայաստանի փորձի փոխանակման գործընկերների ներկայացուցիչներին անձամբ հանդիպելու և փոխադարձ գիտելիքների փոխանակման և օժանդակության հարաբերություն հաստատելու:<br>Հանդիպումը Հայաստանին առիթ կընձեռի հետևյալ կարողությունների կարիքները լրացնելու՝<br>• PISA-ի տեխնիկական ստանդարտների համաձայն CBA անցկացնելու կարողություն:<br>• PISA-ի տեխնիկական ստանդարտների համաձայն թարգմանություն, հարմարեցում և ստուգում կազմակերպելու համար հարկավոր կարողություն: |

## Աղյուսակ 8. CBIS Փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ

PISA-2025 Ստուգատես




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS Փորձի փոխանակման հանդիպում՝ NPM հանդիպում 1-ի ժամանակ |
| Ժամկետ | NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ կնշանակվի 30 րոպե տևողությամբ ժողով (2023 մարտի 13-17) |
| Վայր | Լիսբոն, Պորտուգալիա |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM, Գնահատման գործիքների համակարգող |
| Կարողությունների զարգացման նպատակ | PISA-ի տեխնիկական ստանդարտներին համաձայն փորձնական ստուգատեսի աշխատանքները կատարելու համար փորձի փոխանակման գործընկերոջից սովորել ՝<br>• Թարգմանություն, հարմարեցում և վավերացում,<br>• ուսումնասիրությունների անցկացում: |
| Կոնկրետ արդյունքներ | Հանդիպման ընթացքին արծարծված գլխավոր կետերի արձանագրում |
| Մասնակիցների պատասխանատվություններ | Փորձի փոխանակման հանդիպման ժամանակ արծարծվելիք հարցեր/նյութեր պատրաստել |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | CBIS փոխգործակցության պատասխանատուն կհամադրի փորձի փոխանակման ժողովի անցկացման ժամանակը |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM-ների 1-ին հանդիպման համար հրապարակված փաստաթղթեր և ներկայացումներ |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | Տես NPM հանդիպում 1-ի տվյալ երկրում ծախս |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Ժողովին կներկայացվի մասնակից մի երկրի փորձը՝ որին հաջողվել է փորձնական ստուգատեսի համար անհրաժեշտ աշխատանքները անցկացնել: Նրանք կներկայացնեն մանրամասներ այն մասին, թե ինչն է նրանց օժանդակել հաջող արդյունքի հասնելու, և CBIS NPM-ներին կփոխանցեն իրենց փորձառությունը:<br>Որպես PISA-ին առաջին անգամ մասնակցող՝ սովորել այլ երկրների փորձից և նկատի առնել այն կարևոր կետերը, որոնք հետագայում Հայաստանը կարող է կիրառել PISA-ի անցկացման ժամանակ. դա մեծապես կնպաստի հաջող արդյունքների հասնելուն: |

## Աղյուսակ 9. CBIS աշխատաժողով՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ

PISA-2025 Ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS աշխատաժողով՝ NPM-ների 1-ին հանդիպման ժամանակ |
| Ժամկետ | 2023 թվականի մարտի 18 (0,5 օր) |
| Վայր | Լիսբոն, Պորտուգալիա |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM |
| Կարողությունների զարգացման նպատակ | Հասկանալ, թե ինչպես CBIS ռեսուրսներն ու գործիքները կարող են նպաստել PISA-2025-ի Տեխնիկական Ստանդարտների բավարարմանը |
| Կոնկրետ արդյունքներ | • Օրակարգ<br>• Աշխատաժողովի նյութեր, ներառյալ PowerPoint շնորհանդեսներ<br>• Աշխատաժողովի արձանագրություն՝ մասնակիցների ցանկով |
| Մասնակիցների պատասխանատվություններ | Աշխատաժողովին մասնակցելուց առաջ դիտել աշխատաժողովի նյութերը |
| Ադմինիստրատիվ մանրամասներ | Աշխատաժողովը կանկացվի որպես NPM հանդիպում 1-ի մաս |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • PISA-2025-ի NPM ուղեցույց<br>• PISA-2025-ի տեխնիկական ստանդարտներ<br>• CBIS նախագծի իրականացման ծրագիր<br>• CBIS ազգային կենտրոնի կազմի փաստաթուղթ |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | Տես NPM հանդիպում 1-ի տվյալ երկրում ծախս |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O7 Գործիքների մշակում (կազմավորված)<br>• O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն (կազմավորվող)<br>• O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I3 Նմուշառման ղեկավար (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Որպես CBIS այլընտրանքի մաս՝ որակի երաշխավորման և մոնիթորինգի հետ առնչված մի շարք գործիքներ և ռեսուրսներ կմատակարարվեն: CBIS աշխատաժողովը Հայաստանի NPM-ին առիթ կտա հասկանալու, թե ինչպես կարելի է այս գործիքներն օգտագործել PISA-2025-ի Տեխնիկական Ստանդարտները բավարարելու համար, մասնավորապես՝ CBA-ի դեպքում, եթե Հայաստանը ընտրի այդ մեթոդը: |

## Աղյուսակ 10. Նյութերի հրապարակում NPM-ների 2-րդ հանդիպումից առաջ




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Նյութերի հրապարակում NPM-ների 2-րդ հանդիպումից առաջ |
| Ժամկետ | 2023 թվականի հոկտեմբեր |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | NPM, NSM, NDM, Գնահատման գործիքների համակարգող, Հետազոտման գործողությունների և լոգիստիկայի ղեկավար |
| Կարողությունների զարգացման նպատակ | Ծանոթանալ PISA-2025-ի փորձնական ստուգատեսը կիրառելու համար հարկավոր աշխատանքներին: |
| Կոնկրետ արդյունքներ | • NPM հանդիպում 2-ի թեմաներին վերաբերող նյութեր Նյութերը կհրապարակվեն մի շարք տեսքերով՝<br>  ○ Փաստաթղթեր<br>  ○ Ներկայացում (կենդանի կամ նախօրոք տեսագրված)<br>  ○ Վեբինար<br>  ○ Աշխատաժողով<br>• Ըստ կարիքի՝ վիրտուալ խորհրդակցություններ կկազմակերպվեն պայմանագրերի կողմերի հետ |
| Մասնակիցների պատասխանատվություններ | • Նյութերը դիտել<br>• Ըստ կարիքի՝ ներկայացումների, աշխատաժողովների և խորհրդակցությունների ներկա գտնվել |
| Աղմինիստրատիվ մանրամասներ | NPM-ների 2-րդ հանդիպումից չորս շաբաթ առաջ՝ նյութերը կհրապարակվեն PISA Connect հարթակում |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM-ների 2-րդ հանդիպման օրակարգի նախագիծ |
| Միջազգային ծախս | Ներառված է PISA մասնակցության գումարի մեջ |
| Տվյալ երկրում ծախս | 0 EUR |
| Գործին վերաբերող CNA ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատող անձնակազմ (կազմավորվող)<br>• O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I3 Նմուշառման ղեկավար (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I5 Տվյալների ղեկավար (կազմավորված) |
| Հարկավոր է բավարարել Հայաստանի կարողությունների կարիքները | Ինչպես NPM-ների 1-ին հանդիպման դեպքում, NPM-ների 2-րդ հանդիպմանն ընդառաջ հրապարակված նյութերը առիթ կընձեռեն Հայաստանում անձնակազմի լայն շրջանակին՝ ծանոթանալու NPM-ների 2-րդ հանդիպման ընթացքում օգտագործվելիք նյութերին, և Հայաստանի համատեքստին վերաբերող հարցեր տալու: |

## Աղյուսակ 11. NPM-ների 2-րդ հանդիպում




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն | |
|---|---|---|
| Անվանում | NPM-ների 2-րդ հանդիպ | |
| Ամսաթիվ | Հունվար 2024 | |
| Վայր | Բանգկոկ, Թայլանդ | |
| Թիրախային մասնակիցներ | NPM, NSM | |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ իրականացնել PISA-2025 ստուգատեսի փորձնական ստուգատեսը/փորձնական ստուգատեսը՝ հասկանալով դրա հետ կապված աշխատանքները | |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• PISA-2025 ստուգատեսի փորձնական ստուգատեսի հետևյալ աշխատանքների մասին պրեզենտացիաներ և սեմինարներ՝<br>○ Ընտրանքի որոշում<br>○ Տվյալների կառավարում<br>○ Կոդավորում (ճանաչողական առաջադրանքներ, մասնագիտական կազմի տվյալներ)<br>○ Ուսումնասիրություններ<br>• Անհրաժեշտության դեպքում պայմանագրերի կողմերի հետ կանցկացվեն անհատական խորհրդատվություններ | |
| Մասնակիցների պարտականությունները | • Հանդիպումից առաջ գործին վերաբերող հրապարակված փաստաթղթերի դիտում<br>• Անհրաժեշտության դեպքում պրեզենտացիաներին, սեմինարներին և խորհրդատվություններին մասնակցում | |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | • Հանդիպմանը կարող են մասնակցել յուրաքանչյուր մասնակից երկրից առավելագույնը երկու պատվիրակ<br>• Հանդիպման հրավերն ու օրակարգի նախագիծը կուղարկվի, իսկ գրանցումը կբացվի հանդիպումից 3 ամիս առաջ | |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | Նյութերի հրապարակում՝ հանդիպումից 4 շաբաթ առաջ | |
| Միջազգային ծախսեր | Ներառված են PISA-ի մասնակցության վճարի մեջ | |
| Տվյալ երկրում ծախսեր | Պատվիրակների համար տրանսպորտի, կեցության, սննդի, լրացուցիչ ծախսեր և այլ ճանապարհածախս | |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված) | • I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I3 Նմուշառման ղեկավար (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրություններ և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | NPM հանդիպում 2-ը լավ հնարավորություն կլինի հայկական անձնակազմին՝ ավելի լավ ծանոթանալու և ինքնավստահություն շահելու PISA-2025-ի նմուշառման, տվյալների կառավարման և հետազոտման գործողությունների հետ կապված աշխատանքներին: | |

## Աղյուսակ 12. Փորձնական ստուգատեսի (փորձնական ստուգատեսի) միջազգային վերապատրաստման հանդիպում

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Փորձնական ստուգատեսի միջազգային վերապատրաստման հանդիպում |
| Ամսաթիվ | Փետրվար 2024 |
| Վայր | Բանգկոկ, Թայլանդ |
| Թիրախային մասնակիցներ | Ազգային կոդավորողների վերապատրաստողներ, NDM |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ իրականացնել PISA-2025 ստուգատեսի փորձնական ստուգատեսի հետ կապված ազգային մակարդակի աշխատանքներ<br>• Ծարադրված պատասխանով հարցերի կոդավորում<br>• Տվյալների կառավարում |
| Արդյունքներ | Վերապատրաստման դասընթացներ և կից նյութեր, որոնք նախատեսված են տարբեր ոլորտների և գնահատման եղանակների համար |
| Մասնակիցների պարտականությունները | Դասընթացից առաջ գործին վերաբերող հրապարակված փաստաթղթերի դիտում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | • Ակնկալվում է, որ յուրաքանչյուր ոլորտի համար ազգային մինչև երկու վերապատրաստողներ կմասնակցեն կոդավորողների համար նախատեսված դասընթացին<br>• Հանդիպման հրավերն ու օրակարգի նախագիծը կուղարկվի, իսկ գրանցումը կբացվի հանդիպումից 3 ամիս առաջ<br>• Վերապատրաստման դասընթացի նյութը կհրապարակվի հանդիպումից 2 շաբաթ առաջ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • Կոդավորման ուղեցույցներ<br>• Տվյալների կառավարման ձեռնարկներ |
| Միջազգային ծախսեր | Ներառված են PISA-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | Տե՛ս NPM հանդիպում 2-ի ծախսերը երկրի ներսում |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Քանի որ Հայաստանն առաջին անգամ է մասնակցում PISA ստուգատեսին, կարևոր է, որ տվյալների բաժնի կառավարիչը և ազգային կոդավորողների վերապատրաստողները մասնակցեն դասընթացին՝ հասկանալու համար ճանաչողական առաջադրանքների շարադրված պատասխանների և տվյալների կառավարման հետ կապված աշխատանքների համար նախատեսված PISA-ի կոդավորման ընթացակարգերը: |

### Աղյուսակ 13. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM հանդիպում 2-ի ժամանակ |
| Ամսաթիվ | NPM-ների 2-րդ հանդիպում. կնշանակվի 30 րոպե տևողությամբ հանդիպում (Հունվար/փետրվար 2024) |
| Վայր | Բանգկոկ, Թայլանդ |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM, NDM |
| Կարողությունների զարգացման նպատակ | Սովորել գործընկերոջից, թե ինչպես կատարել հետևյալ ոլորտների հետ կապված փորձնական ստուգատեսը՝ համաձայն PISA-ի տեխնիկական ստանդարտների՝<br>• Կոդավորում<br>• Տվյալների կառավարում |
| Արդյունքներ | Հանդիպմանը քննարկված հիմնական կետերի արձանագրություն |
| Մասնակիցների պարտականությունները | Փորձի փոխանակման հանդիպման ժամանակ քննարկվելիք հարցերի/նյութերի պատրաստում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | CBIS-ի փոխգործակցության պատասխանատուն կծրագրի փորձի փոխանակման հանդիպման անցկացումը |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM-ների 2-րդ հանդիպման համար հրապարակված փաստաթղթեր և սահիկաշարեր |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | Տե՛ս NPM հանդիպում 2-ի ծախսերը երկրի ներսում |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Փորձի փոխանակման հանդիպումը՝ NPM հանդիպում 2-ի ժամանակ, հրաշալի հնարավորություն կընձեռնի հայկական անձնակազմին՝ դեմ առ դեմ հանդիպելու փորձի փոխանակման իրենց գործընկերներին և քննարկելու փորձնական ստուգատեսի առաջիկա աշխատանքները՝ մասնավորապես կոդավորման և տվյալների կառավարման հետ կապված: |

## Աղյուսակ 14. CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ

PISA-2025 ստուգատես




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն | |
|---|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 2-րդ հանդիպման ժամանակ | |
| Ամսաթիվ | 2023 թվականի նոյեմբեր (Հունվար/փետրվար 2024) | |
| Վայր | Բանգկոկ, Թայլանդ | |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM | |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ կազմել որակի ապահովման ազգային պլան՝ PISA-2025 ստուգատեսի փորձնական ստուգատեսի իրականացման համար | |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• Սեմինարի նյութը՝ ներառյալ CBIS-ի Ազգային կենտրոնի որակի մոնիթորինգի (NCQM) փաթեթը՝ փորձնական ստուգատեսի համար<br>• Սեմինարի արձանագրություն՝ մասնակիցների ցուցակով | |
| Մասնակիցների պարտականությունները | Սեմինարին մասնակցելուց առաջ սեմինարի նյութի դիտում | |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | Սեմինարը կանցկացվի NPM հանդիպում 2-ի շրջանակներում | |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • CBIS-ի Ազգային կենտրոնի որակի մոնիթորինգի (NCQM) փաթեթ՝ փորձնական ստուգատեսի համար, ներառյալ՝<br>  ○ NCQM-ի ուղեցույց՝ NPM-ի համար<br>  ○ NCQM-ի ձեռնարկ<br>  ○ NCQM-ի վերապատրաստման ծրագիր<br>  ○ NCQM-ի զեկույցի ձև | |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ | |
| Տվյալ երկրում ծախսեր | Տե՛ս NPM հանդիպում 2-ի ծախսերը երկրի ներսում | |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) | • I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I4 Ուսումնասիրություններ և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | ATC-ն լավ պատրաստված է՝ PISA-ի Ուսումնասիրություններն իրականացնելու համար: Սակայն, եթե Հայաստանը որոշի կիրառել CBA, դա կենթադրի ավելի բարդ Ուսումնասիրություններ և լոգիստիկա: Պահանջվելու են կարողություններ՝ որակի ապահովման մեխանիզմների պլանավորման համար՝ երաշխավորելու համար, որ CBA-ի հետ կապված Ուսումնասիրությունները լինելու են ստանդարտացված, մշտադիտարկված և փաստագրված: PISA-2025 ստուգատեսի փորձնական ստուգատեսի իրականացման որակի ապահովման ազգային պլանը մեծապես կօգնի այս կարողությունների զարգացմանը: | |

## Աղյուսակ 15. CBIS-ի շրջանակներում մասնագիտական կողավորման հետագա վերապատրաստում

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում մասնագիտական կողավորման հետագա վերապատրաստում |
| Ամսաթիվ | 2024 թվականի սկիզբ (1,5 ժամ) |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ կազմակերպել ազգային մակարդակի աշխատանքները՝ կապված զբաղմունքներին վերաբերող տվյալների կողավորման հետ՝ ավելի խորը պատկերացում կազմելով աշխատանքների մասին |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• Գործին վերաբերող վերապատրաստման նյութեր<br>• Դասընթացի արձանագրություն՝ մասնակիցների ցանկով |
| Մասնակիցների պարտականությունները | Դասընթացից առաջ դասընթացի նյութի դիտում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | • Սա լրացուցիչ դասընթաց է՝ նախատեսված CBIS-ի մասնակիցների համար՝ NPM-ների 2-րդ հանդիպման շրջանակներում բոլոր NPM-ների համար կազմակերպված նախնական դասընթացից հետո:<br>• Այն CBIS-ի մասնակիցների հետ հարմարեցված նախնական դասընթաց է, որի ժամանակ խոսվում է զբաղմունքային տվյալների կողավորման կազմակերպման լավագույն մոտեցման վերաբերյալ:<br>• Օրակարգն ու վերապատրաստման դասընթացի նյութը կհրապարակվի հանդիպումից 1 շաբաթ առաջ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | Մասնագիտական կազմի տվյալների կողավորման նյութեր, որոնք հրապարակվել են NPM-ների 2-րդ հանդիպման համար |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | 0 EUR |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Զբաղմունքներին վերաբերող տվյալների կողավորումը կիրականացվի ըստ զբաղմունքների միջազգային ստանդարտ դասակարգչի: Լրացուցիչ դասընթացը կօգնի NPM-ին ավելի լավ հասկանալ, թե ինչ է պահանջվում կողավորման աշխատանքներն իրականացնելու համար: |

## Աղյուսակ 16. Նյութերի հրապարակում NPM-ների 3-րդ հանդիպումից առաջ

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Նյութերի հրապարակում NPM-ների 3-րդ հանդիպումից առաջ |
| Ամսաթիվ | 2024 թվականի նոյեմբեր |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | NPM, Տվյալների վերլուծաբան, NSM, NDM, Ազգային կոդավորողների վերապատրաստողներ, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար |
| Կարողությունների զարգացման նպատակ | Ծանոթանալ այն աշխատանքներին, որոնք պահանջվում են՝ PISA-2025 ստուգատեսի հիմնական հետազոտությունն իրականացնելու համար |
| Արդյունքներ | • NPM հանդիպում 3-ի թեմաներին վերաբերող նյութեր: Նյութերը կհրապարակվեն տարբեր ձևաչափերով՝<br>○ Փաստաթղթեր<br>○ Ծնորհանդես (ուղիղ կամ ձայնագրված)<br>○ Վեբինար<br>○ Սեմինար<br>• Անհրաժեշտության դեպքում պայմանագրերի կողմերի հետ կանցկացվեն վիրտուալ խորհրդատվություններ |
| Մասնակիցների պարտականությունները | • Նյութերի դիտում<br>• Անհրաժեշտության դեպքում պրեզենտացիաներին, սեմինարներին և խորհրդատվություններին մասնակցել |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | Հանդիպումից 4 շաբաթ առաջ նյութերը կհրապարակվեն PISA Connect հարթակում |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM հանդիպում 3-ի օրակարգի նախագիծ |
| Միջազգային ծախսեր | Ներառված են PISA-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | 0 EUR |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• O12 Տվյալների վերլուծություն և զեկուցում (կազմավորվող)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I3 Նմուշառման ղեկավար (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրություններ և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված)<br>• I6 Տվյալների վերլուծաբան (կազմավորվող) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | NPM հանդիպում 3-ից առաջ տրամադրված նյութերը հնարավորություն կտան Հայաստանի թիմին ծանոթանալու այն թեմաներին, որոնք պետք է քննարկվեն NPM հանդիպում 3-ի ժամանակ, պատրաստելու հարցեր՝ փորձնական ստուգատեսի ընթացքում ծագած խնդիրների և NPM հանդիպում 3-ից առաջ տրամադրված նյութերի հետ կապված: |

## Աղյուսակ 17. NPM-ների 3-րդ հանդիպում

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | NPM-ների 3-րդ հանդիպում |
| Ամսաթիվ | 2024 թվականի նոյեմբեր |
| Վայր | Սիդնեյ, Ավստրալիա |
| Թիրախային մասնակիցներ | NPM (այլ թիրախային մասնակիցներ․ ենթակա է հաստատման) |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ իրականացնել PISA-2025 ստուգատեսի հիմնական հետազոտությունը՝ հասկանալով դրա հետ կապված աշխատանքները |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• PISA-2025 ստուգատեսի հիմնական հետազոտության հետևյալ աշխատանքների մասին պրեզենտացիաներ և սեմինարներ՝<br>  ○ Փորձնական ստուգատեսի արդյունքների վերանայում<br>  ○ Հիմնական հետազոտության համար առաջարկվող գործիքներ<br>  ○ Հիմնական հետազոտության նախապատրաստում<br>• Անհրաժեշտության դեպքում պայմանագրերի կողմերի հետ կանցկացվեն անհատական խորհրդատվություններ |
| Մասնակիցների պարտականությունները | • Հանդիպումից առաջ գործին վերաբերող հրապարակված փաստաթղթերի դիտում<br>• Անհրաժեշտության դեպքում պրեզենտացիաներին, սեմինարներին և խորհրդատվություններին մասնակցել |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | • Հանդիպմանը կարող են մասնակցել յուրաքանչյուր մասնակից երկրից առավելագույնը երկու պատվիրակ<br>• Հանդիպման հրավերն ու օրակարգի նախագիծը կուղարկվի, իսկ գրանցումը կբացվի հանդիպումից 3 ամիս առաջ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • Նմուշառման ուղեցույց<br>• Ուսումնասիրությունների ձեռնարկ<br>• Նյութերի հրապարակում՝ հանդիպումից 4 շաբաթ առաջ |
| Միջազգային ծախսեր | Ներառված են PISA-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | Պատվիրակների համար տրանսպորտի, կեցության, սննդի, լրացուցիչ ծախսեր և այլ ճանապարհածախս |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• O12 Տվյալների վերլուծություն և զեկուցում (կազմավորվող)<br><br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I3 Նմուշառման ղեկավար (կազմավորվող)<br>• I4 Ուսումնասիրություններ և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված)<br>• I6 Տվյալների վերլուծաբան (կազմավորվող) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Փորձնական ստուգատեսից ստացված վերլուծությունների արդյունքները ցուցադրող սահիկաշարերը հնարավորություն կտան հայկական թիմին հասկանալու, թե ինչպես բարելավել Ուսումնասիրությունների և լոգիստիկայի, կոդավորման և տվյալների կառավարման հետ կապված աշխատանքները հիմնական հետազոտության համար: |

## Աղյուսակ 18. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ

PISA-2025 ստուգատես

| 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|

↑-ի մեկնարկը
Ազգային զեկույց

| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման հանդիպում՝ NPM հանդիպում 3-ի ժամանակ |
| Ամսաթիվ | NPM հանդիպում 3-ի ընթացքին կնշանակվի 30 րոպե տևողությամբ հանդիպում (2024 թվականի նոյեմբեր) |
| Վայր | Սիդնեյ, Ավստրալիա |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM (այլ թիրախային մասնակիցներ․ ենթակա է հաստատման) |
| Կարողությունների զարգացման նպատակ | Սովորել գործընկերոջից, թե ինչպես կատարել հետևյալ ոլորտների հետ կապված հիմնական հետազոտական աշխատանքները՝ համաձայն PISA-ի տեխնիկական ստանդարտների՝<br>• Կոդավորում<br>• Տվյալների կառավարում |
| Արդյունքներ | Հանդիպմանը քննարկված հիմնական կետերի արձանագրություն |
| Մասնակիցների պարտականությունները | Փորձի փոխանակման հանդիպման ժամանակ քննարկվելիք հարցերի/նյութերի պատրաստում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | CBIS-ի փոխգործակցության պատասխանատուն կծրագրի փորձի փոխանակման հանդիպման անցկացումը |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | NPM-ների 3-րդ հանդիպման համար հրապարակված փաստաթղթեր և պրեզենտացիաներ |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | Տես NPM հանդիպում 3-ի տվյալ երկրի ներսում ծախսերը |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br><br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I5 Տվյալների ղեկավար (կազմավորված) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Փորձի փոխանակման հանդիպումը Հայաստանի թիմին հնարավորություն կընձեռի իրենց փորձի փոխանակման գործընկերներին հարցեր տալու՝ NPM-ների 3-րդ հանդիպման հիմնական թեմաների վերաբերյալ: Հիմնական թեմաները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ հիմնական հետազոտության համար ընտրանքի որոշում, տվյալների կառավարում, կոդավորում և ուսումնասիրություններ: |

## Աղյուսակ 19. CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում սեմինար՝ NPM-ների 3-րդ հանդիպման ժամանակ |
| Ամսաթիվ | 2024 թվականի նոյեմբեր (0,5 օր) |
| Վայր | Սիդնեյ, Ավստրալիա |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM (այլ թիրախային մասնակիցներ․ ենթակա է հաստատման) |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ կազմել որակի ապահովման ազգային պլան PISA-2025 ստուգատեսի Հիմնական հետազոտության իրականացման համար՝ հիմնված փորձնական ստուգատեսից քաղված դասերի վրա |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• Սեմինարի նյութը՝ ներառյալ CBIS-ի Ազգային կենտրոնի որակի մոնիթորինգի (NCQM) փաթեթը՝ հիմնական հետազոտության համար<br>• Սեմինարի արձանագրություն՝ մասնակիցների ցուցակով |
| Մասնակիցների պարտականությունները | Սեմինարին մասնակցելուց առաջ սեմինարի նյութի դիտում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | Սեմինարը կանցկացվի NPM-ների 3-րդ հանդիպման շրջանակներում |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | CBIS-ի NCQM փաթեթ՝ հիմնական հետազոտության համար, ներառյալ՝<br>• NCQM-ի ուղեցույց՝ NPM-ի համար<br>• NCQM-ի ձեռնարկ<br>• NCQM-ի վերապատրաստման ծրագիր<br>• NCQM-ի զեկույցի ձև |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | Տես NPM հանդիպում 3-ի տվյալ երկրի ներսում ծախսերը |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I4 Ուսումնասիրություններ և լոգիստիկայի ղեկավար (կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | NPM հանդիպում 3-ի ժամանակ CBIS-ի սեմինարը հնարավորություն կտա NPM-ին անդրադառնալու իրենց փորձնական ստուգատեսների իրականացմանը, բացահայտելու իրենց քաղած դասերը և կիրառելու դրանք հիմնական հետազոտության Ուսումնասիրությունների բարելավման համար: |

## Աղյուսակ 20. Հիմնական հետազոտության միջազգային ուսումնական հանդիպում




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Հիմնական հետազոտության միջազգային ուսումնական հանդիպում |
| Ամսաթիվ | 2025 թվականի հունվար |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | Ազգային կոդավորողների վերապատրաստողներ, NDM |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ իրականացնել PISA-2025 ստուգատեսի հիմնական հետազոտության հետ կապված ազգային մակարդակի աշխատանքներ<br>• Ծարադրված պատասխանով հարցերի կոդավորում<br>• Տվյալների կառավարում |
| Արդյունքներ | Վերապատրաստման դասընթացներ և կից նյութեր, որոնք նախատեսված են տարբեր ոլորտների և գնահատման եղանակների համար |
| Մասնակիցների պարտականությունները | Դասընթացից առաջ գործին վերաբերող հրապարակված փաստաթղթերի դիտում |
| Ադմինիստրատիվ տեղեկատվություն | • Ակնկալվում է, որ յուրաքանչյուր ոլորտի համար ազգային մինչև երկու վերապատրաստողներ կմասնակցեն կոդավորողների համար նախատեսված դասընթացին<br>• Հանդիպման հրավերն ու օրակարգի նախագիծը կուղարկվի, իսկ գրանցումը կբացվի հանդիպումից 3 ամիս առաջ<br>• Վերապատրաստման դասընթացի նյութը կիրապարակվի հանդիպումից 2 շաբաթ առաջ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | • Կոդավորման ուղեցույցներ<br>• Տվյալների կառավարման ձեռնարկներ |
| Միջազգային ծախսեր | Ներառված են PISA-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | 0 EUR |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O1 Գնահատման անձնակազմ (կազմավորվող)<br>• O11 Տվյալների կառավարում (կազմավորված)<br>• I1 Ազգային նախագծի ղեկավար (կազմավորված)<br>• I2 Գնահատման գործիքների համակարգող (կազմավորվող)<br>• I5 Տվյալների բաժնի ղեկավար (կազմավորված) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Մասնակցելով հիմնական հետազոտության կոդավորման և տվյալների կառավարման վերապատրաստման դասընթացին՝ Հայաստանի տվյալների ղեկավարը հնարավորություն կունենա միջազգային գնահատման շրջանակներում ծանոթանալու մեծ տվյալների բազայի հետ աշխատելու փորձին:<br>Քանի որ կոդավորման դասընթացն անցկացվում է «դասավանդի՛ր դասատուին» ձևաչափով, անհրաժեշտ է որ ավագ կոդավորողներ մասնակցեն այս դասընթացին, որպեսզի վերադառնալուց հետո, իրենք էլ իրենց հերթին վերապատրաստեն Ազգային կենտրոնի կոդավորողներին: |

### Աղյուսակ 21. CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման վեբինար՝ շահագրգիռ կողմերի ներգարվվածության վերաբերյալ՝ օգտագործելով PISA-ի տվյալները




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | CBIS-ի շրջանակներում փորձի փոխանակման վեբինար՝ շահագրգիռ կողմերի ներգարվվածության վերաբերյալ՝ օգտագործելով PISA-ի տվյալները |
| Ամսաթիվ | Հիմնական հետազոտությունից հետո ազգային տվյալների փայլի ներկայացում (1,5 ժամ) |
| Վայր | Առցանց |
| Թիրախային մասնակիցներ | CBIS NPM, Տվյալների վերլուծաբան |
| Կարողությունների զարգացման նպատակ | Փորձի փոխանակման գործընկերոջ գործնական փորձից սովորել, թե ինչպես օգտագործել PISA-ի տվյալները՝ շահագրգիռ կողմերին ներգրավելու համար |
| Արդյունքներ | • Օրակարգ<br>• Շնորհանդեսի նյութեր<br>• Հանդիպման արձանագրություն՝ մասնակիցների ցուցակով |
| Մասնակիցների պարտականությունները | Փորձի փոխանակման հանդիպման ժամանակ քննարկվելիք հարցերի/նյութերի պատրաստում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | CBIS-ի փոխգործակցության պատասխանատուն կծրագրի փորձի փոխանակման հանդիպման անցկացումը |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | Զեկուցման և սփռման մասին հրապարակված փաստաթղթեր |
| Միջազգային ծախսեր | Ներառված են CBIS-ի մասնակցության վճարի մեջ |
| Տվյալ երկրում ծախսեր | 0 EUR |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O12 Տվյալների վերլուծություն և զեկուցում (կազմավորվող)<br>• O13 Սփռում և հաղորդում (կազմավորվող)<br>• I6 Տվյալների վերլուծաբան (կազմավորվող) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | Փորձի փոխանակման հանդիպումը կարող է Հայաստանի թիմին օգնել զարգացնելու՝<br>• Տարբեր շահագրգիռ կողմերին զեկույցներ ներկայացնելու և տարածելու համար անհրաժեշտ եղանակները և մոտեցումները հարմարեցնելու կարողություն<br>• PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի տվյալները ազգային միջավայրում օգտագործելու կարողություն: |

## Աղյուսակ 22. Վերլուծություն և Զեկուցում գործընկերության այլընտրանք




| Տեղեկատվության կատեգորիա | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Վերլուծություն և Զեկուցում (A&R) գործընկերության այլընտրանք |
| Ամսաթիվ | 2026 թվականի ապրիլ - դեկտեմբեր (ինը ամիս) |
| Վայր | Ժամանակաշրջանի մի հատվածը կանցկացվի ՏՀԶԿ-ում՝ Փարիզում (Ֆրանսիա), իսկ մնացած մասը՝ տվյալ երկրում: |
| Թիրախային մասնակիցներ | PISA-ի մասնակից առաջատար վերլուծաբան |
| Կարողությունների զարգացման նպատակ | Կարողանալ՝<br>• Վերլուծել և մեկնաբանել PISA-ի տվյալները<br>• Կազմել PISA-2025 ստուգատեսի Ազգային զեկույցի նախագիծը<br>• Մշակել հաղորդակցության ռազմավարություն<br>• Սփռել արդյունքները<br>• Արդյունքները և քաղաքականության վրա դրանց ազդեցությունը ազգային համատեքստում օգտագործել |
| Արդյունքներ | • PISA-ի արդյունքները հաղորդելու և սփռելու ռազմավարություն<br>• PISA-ի արդյունքները ներկայացնող ազգային զեկույց: |
| Մասնակիցների պարտականությունները | • 2026 թվականի ապրիլից սեպտեմբեր ընկած որոշ ժամանակահատվածում Փարիզում անցկացնելու կարողություն<br>• Կարողությունների զարգացման փորձի կիսում PISA-ի Ազգային կենտրոնում |
| Աղմինիստրատիվ տեղեկատվություն | • Գործընկերային աշխատանքը առաջարկվում է ՏՀԶԿ-ի կողմից և ուղղված է PISA-ի Ազգային կենտրոնների առաջատար վերլուծաբաններին<br>• Մասնակցության վճարի մեջ ներառված է առաջատար վերլուծաբանի ճանապարհածախսը և օրապահիկը (կեցության և սննդի ծախսերը հոգալու համար)<br>• Գործընկերային աշխատանքը կամփոփվի 2026 թվականի դեկտեմբերին՝ PISA ազգային զեկույցի հրապարակմամբ |
| Գործին վերաբերող փաստաթղթեր | PISA-2025 ստուգատեսի հիմնական հետազոտությունից ստացված ազգային տվյալներ |
| Միջազգային ծախսեր | Ներառված է A&R մասնակցության սակի մեջ (250 000 EUR) |
| Տվյալ երկրում ծախսեր | • Առաջատար վերլուծաբանի համար ապահովագրական և այլ ճանապարհորդական ծախսեր<br>• Առաջատար վերլուծաբանի աշխատավարձը շարունակում է վճարել գործատուն |
| CNA-ի համապատասխան ցուցանիշի ընդգրկույթ | • O12 Տվյալների վերլուծություն և զեկուցում (կազմավորվող)<br>• O13 Սփռում և հաղորդում (կազմավորվող)<br>• I6 Տվյալների վերլուծաբան (կազմավորվող) |
| Ուշադրության արժանի Հայաստանի կարողությունների կարիքները | PISA-ն առաջին միջազգային լայնածավալ գնահատման ծրագիրն է, որի համար ATC-ն կիրականացնի ազգային մակարդակի վերլուծություններ և զեկույցների կազմում: A&R գործընկերային աշխատանքը Հայաստանին հնարավորություն կտա զարգացնելու կարողությունները կազմակերպչական և անհատական մակարդակներում՝<br>• Վերլուծել և մեկնաբանել PISA-ի տվյալները<br>• PISA-ի տվյալները ազգային համատեքստում օգտագործել<br>• Տարբեր շահագրգիռ կողմերին զեկույցներ ներկայացնելու և սփռելու համար անհրաժեշտ եղանակները և մոտեցումները հարմարեցնելու կարողություն: |

# Հավելված Ա CBIS-ի Կարողությունների կարիքների գնահատման կառուցվածքը

## Հարթություններ

PISA-2025 ստուգատեսը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հնարավորություններն ու կարիքները դասակարգվել են՝ ըստ երեք հարթությունների՝

1. **Հնարավորություններ ընձեռող միջավայր՝** ուշադրություն է դարձվում համակարգային մակարդակով երկրում անցկացվող լայնածավալ գնահատումների համատեքստին: Այս հարթությունը վերաբերում է գնահատման համակարգի ավելի ընդհանուր կողմերին, ինչպիսիք են քաղաքականությունը և կանոնակարգերը, ինստիտուցիոնալ մեխանիզմներն ու ֆինանսավորումը:
2. **Կազմակերպչական մակարդակ՝** ուշադրություն է դարձվում ազգային մակարդակով լայնածավալ գնահատումներ իրականացնելու հետ կապված կարողությունների ուժեղ կողմերին և կարիքներին: Լուսաբանվում են լայնածավալ գնահատումներից ստացված տվյալների կառավարման, մշակման, կիրառման և վերլուծության կազմակերպչական ասպեկտները՝ կենտրոնանալով PISA-ի իրականացման վրա:
3. **Անհատական մակարդակ՝** ուշադրություն է դարձվում հիմնական պաշտոնական դիրքերին և պարտականություններին, ինչպես նաև այն գիտելիքներին, հմտություններին և փորձառությանը, որոնք անհրաժեշտ են՝ PISA-ի հետ կապված տարբեր աշխատանքներ հաջողությամբ կատարելու համար:

Այս երեք հարթությունների միջոցով CNA-ը բացահայտում է կարողությունների ուժեղ կողմերն ու կարիքները, որոնք անհրաժեշտ են PISA-ն հաջողությամբ իրականացնելու համար՝ ներկա և ապագա ցանկալի կարողությունների ավելի լայն համատեքստում և կայուն գնահատման համակարգի դեպքում:

## Ցուցանիշներ

Յուրաքանչյուր հարթության համար կարողությունների բազմաթիվ ցուցանիշներ են սահմանված: Ընդգրկված են հետևյալ կետերը՝

- **Հնարավորություններ ընձեռող միջավայր՝** E1 Գնահատման համակարգի կառուցվածք, E2 Օրենսդրություն կամ քաղաքականություն, E3 Ղեկավարություն, E4 Կազմակերպչական մեխանիզմներ, E5a Ֆինանսավորում, E5b Նվիրատուների կողմից ֆինանսավորում, E6 Գնահատման տվյալների օգտագործում, E7 Կրթության կառավարման տեղեկատվության համակարգ:
- **Կազմակերպչական մակարդակ՝** O1 Գնահատման անձնակազմ, O2 Ֆինանսավորման մոբիլիզացում, O3 Ժամանակավոր աշխատակազմ, O4 Ֆիզիկական ենթակառուցվածք, O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն, O6 Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր, O7 Գործիքների մշակում, O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն, O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում, O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա, O11 Տվյալների

կառավարում, O12 Տվյալների վերլուծություն և հաշվետվություն, O13 Սփռում և հաղորդակցություն:

- **Անհատական մակարդակ՝** I1 Ազգային նախագծի ղեկավար, I2 Գնահատման գործիքների համակարգող, I3 Նմուշառման ղեկավար, I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար, I5 Տվյալների ղեկավար, I6 Տվյալների վերլուծաբան, I7 Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, I8 Հաղորդակցություն անգլերեն լեզվով:

Կարողությունների ցուցանիշների ամբողջական նկարագրությունը ներկայացված է Հավելված B-ում:

## Վարկանշային չափանիշներ

Վարկանշային չափանիշներ են սահմանվել յուրաքանչյուր ցուցանիշի ընդգրկույթի համար՝ գնահատման գործընթացին աջակցելու և կարողությունների ուժեղ կետերն ու կարիքները բացահայտելու նպատակով: Առանձնանում են երեք չափանիշներ՝

- **Լատենտ՝** Կարողությունը քիչ է կամ բացակայում է (այս ցուցանիշի ընդգրկույթում) -- պահանջվում է կարողությունների զգալի զարգացում:
- **Կազմավորվող՝** Առկա են որոշակի կարողություններ (այս ցուցանիշի ընդգրկույթում) -- պահանջվում է կարողությունների զարգացում:
- **Կազմավորված՝** Առկա են բավարար կարողություններ (այս ցուցանիշի ընդգրկույթում) – կարողությունների զարգացումը պարտադիր չէ:

# Հավելված Բ CBIS Կարողությունների կարիքների գնահատման ցուցանիշներ

## Աղյուսակ A B.1. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՁԵՌՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՁԵՌՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| E1 Գնահատման համակարգի կառուցվածքը | E2 Օրենսդրություն կամ քաղաքականություն | E3 Ղեկավարություն | E4 Կազմակերպչական մեխանիզմներ | E5a Ֆինանսավորում | E5b Նվիրատուների կողմից ֆինանսավորում | E6 Գնահատման տվյալների օգտագործում | E7 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ |
| Լայնածավալ գնահատման ծրագրերը գնահատման համակարգի մի մասն են կազմում՝ կրթական համակարգի համապատասխան մակարդակներում՝ տարրական և միջնակարգ կրթության հիմնական փուլերում, ուսման գլխավոր ոլորտներում աշակերտների կատարողականի և համատեքստի մասին տվյալներ մատակարարելու համար: | Գնահատման լայնածավալ ծրագրերը, որոնք գնահատման համակարգի մաս են կազմում, առաջնորդվում են օրենսդրությամբ կամ քաղաքականությամբ: | Կառավարությունը բարձր ղեկավարության մակարդակով ցուցաբերում է քաղաքական կամք՝ ի աջակցություն լայնածավալ գնահատումների: Մշակվել է ռազմավարություն, որով նաև խրախուսվում է գնահատմանը մասնակցությունը, գնահատման արդյունավետ իրականացումը և արդյունքների սփռումը ազգային բոլոր համապատասխան շահառուների շրջանում: | Կառավարությունը կայացած ինստիտուցիոնալ կարգավորումներ ունի լայնածավալ գնահատումների համար՝ հաշվետվողականության հստակ մեխանիզմներով: | Կառավարությունը բավարար և կայուն ֆինանսավորում է տրամադրում լայնածավալ գնահատումների համար: | Կառավարությունը ֆինանսավորում է ստանում նվիրատուներից՝ լայնածավալ գնահատումներ անցկացնելու համար: | Կառավարությունը և հիմնական շահագրգիռ կողմերը հնարավորություն ունեն օգտագործելու լայնածավալ գնահատումների տվյալները՝ փաստերի վրա հիմնված կրթական քաղաքականություն մշակելու և պլանավորում համար: | Կառավարությունը մշակել է դպրոցի, ուսուցիչների և աշակերտների հետ կապված տվյալների և տեղեկատվության հավաքման, ինտեգրման, մշակման, պահպանման և օգտագործման համակարգ: |

## Աղյուսակ A B.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

| **ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| O1 Գնահատման անձնակազմ | O2 Ֆինանսավորման մոբիլիզացում | O3 Ժամանակավոր աշխատակազմ | O4 Ֆիզիկական ենթակառուցվածք | O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն | O6 Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր |
| Ունենք նվիրված և հմուտ գնահատման անձնակազմ, որը կատարում է լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքներ, այդ թվում՝ կառավարում, գործիքների մշակում, թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն, թեստերի կազմում, ընտրանքի որոշում, ուսումնասիրություններ և լոգիստիկա, տվյալների կառավարում, տվյալների վերլուծություն, զեկույցների կազմում և տարածում: Գնահատման կենտրոնի անձնակազմի համար նախատեսված է կարողությունների զարգացում: | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնը ի վիճակի է մոբիլիզացնել հատկացված միջոցները՝ լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքները կատարելու համար: Ֆինանսավորումը նախատեսված է նաև գնահատման կենտրոնի անձնակազմի կարողությունների զարգացման համար: | Գործում են հստակ և թափանցիկ չափանիշներ և ընթացակարգեր՝ ժամանակավոր անձնակազմի (որի մեջ մտնում են լեզվի թարգմանիչներն ու համակարգողները, քննությունների անցկացման ադմինիստրատորները, որակը վերահսկողները, շարադրողական պատասխաններ պահանջող կետերի կոդավորողները, զբաղմունքների տվյալները կոդավորողները և տվյալների մուտքագրման ու տվյալների կառավարման տեխնիկական անձնակազմը) աշխատանքի ընդունման և վարձատրության համար: | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնն ունի բավարար ֆիզիկական ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ապահով գրասենյակային տարածք, հանդիպումների սենյակներ, միջազգային հեռախոսակապով հեռախոսներ և տվյալների մշակման, կոդավորման գործառնությունների և գնահատման նյութերի պահպանման ապահով հարմարությունները: | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնն ունի բավարար ՏՏ ենթակառուցվածք, այսինքն՝ ունի Windows-ով աշխատող համակարգիչներ՝ Microsoft Office-ի ամենաթարմ ծրագրով, բարձր թողունակությամբ ինտերնետային կապ, ապահով ցանցային միջավայր, ապահով սերվերներ, ամպային հասանելիություն/հիշողություն, տպիչներ, պատճենահանող սարքեր, սկաներներ և էլփոստ: Ընտրվում, ձեռք են բերվում, տեղադրվում և պահպանվում են անհրաժեշտ մասնագիտացված ծրագրերի լիցենզիաները: ՏՏ անձնակազմը հասանելի է՝ ՏՏ ոլորտին առնչվող բոլոր հարցերում գնահատման անձնակազմին օգնելու համար: | Սահմանվել են անվտանգության քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ապահովելու համար գնահատման նյութերի և տվյալների ապահով և գաղտնի պահպանումը: Իրավական պարտավորեցնող միջոցներ են ձեռնարկվել՝ սահմանված պահանջներին հետևելու համար (օրինակ՝ գաղտնիության պայմանագրեր): |

 © OCDE 2023

| ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ շար. | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| O7 Գործիքների մշակում | O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն | O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում | O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա | O11 Տվյալների կառավարում | O12 Տվյալների վերլուծություն և զեկուցում | O13 Սփռում և հաղորդում |
| Գործում են որակի ապահովման մեխանիզմներ, որոնք երաշխավորում են գնահատման գործիքների վստահելիությունը, վավերականությունը և արդարությունը: | Այն դեպքերում, երբ գնահատման գործիքները մշակվում են մեկից ավելի լեզուներով, լեզվական որակի երաշխավորման ընթացակարգեր են հաստատված, որոնց նպատակն է պահպանել տարբեր լեզուներով կետերի լեզվաբանական և հոգեմետրիկ համարժեքությունը: | Ընտրանքի շրջանակն ամբողջական պատկերացում է տալիս որոշված թիրախային բնակչության մասին: Թիրախային բնակչության հատվածի գնահատման գործնական կետերը նկատի են առնվում ընտրանքի որոշման ժամանակ: Բացառությունները հստակ ձևակերպված և փաստագրված են: | Գործում են որակի ապահովման մեխանիզմներ՝ ապահովելու համար ուսումնասիրությունների ստանդարտացումը, մոնիթորինգը և փաստագրումը: Առկա են մասնակցությունը երաշխավորելու և պատասխանների դրույքաչափերը մշտադիտարկելու համար միջոցներ: | Գործում են որակի ապահովման մեխանիզմներ՝ ապահովելու համար, որպեսզի վերջնական տվյալների բազան զերծ լինի անհամապատասխանություններից և սխալներից, ունենա պատշաճ կառուցվածք և լինի փաստագրված: | Կիրառվում են տեխնիկական տեսանկյունից վստահելի և պատշաճ տվյալների վերլուծության մեխանիզմներ՝ վերլուծական արդյունքներ ստանալու համար, որոնք թույլ են տալիս ճշգրիտ և օգտակար եզրակացություններ անել հետաքրքրություն ներկայացնող բնակչության հատվածի կամ հատվածների վերաբերյալ: Վերլուծական արդյունքները ամբողջովին փաստագրված և վերարտադրելի են: | Հաշվետվությունների և տվյալների հրապարակման համապատասխան միջոցներն ու մոտեցումները հարմարեցված են տարբեր շահագրգիռ կողմերին և նպաստում են այդ խմբերի կողմից գնահատման տվյալների և արդյունքների պատշաճ և արդյունավետ կիրառմանը: |

## Աղյուսակ A B.3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

| ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| I1 Ազգային նախագծի ղեկավար | I2 Գնահատման գործիքների համակարգող | I3 Ընտրանքի ղեկավար | I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար | I5 Տվյալների ղեկավար | I6 Տվյալների վերլուծաբան | I7 ՏՏ համակարգող | I8 Անգլերեն հաղորդակցություն |
| Գնահատման կենտրոնում ունեն հմուտ և փորձառու Ազգային ծրագրի ղեկավար (NPM), որը որոշումներ կայացնելու իրավասություն ունի, ղեկավարում է գնահատման անձնակազմը և վերահսկում է գնահատման հետ կապված բոլոր գործողությունները: Ազգային նախագծի ղեկավարն աշխատում է լրիվ դրույքով գնահատման ամբողջ ընթացքում: | Գնահատման գործիքների հետ կապված ազգային մակարդակի աշխատանքները (որոնց մեջ մտնում են՝ թարգմանության կազմակերպում, հարմարեցում և ստուգում, շարադրված պատասխաններ պահանջող կետերի կոդավորում և գրաղմունքային տվյալների կոդավորում) վերահսկվում են գնահատման գործիքների հմուտ և փորձառու ղեկավարի կողմից: Կարող են ներգրավվել ոլորտային և համատեքստային փորձագետներ՝ աջակցելու համար ազգային բովանդակությամբ առաջադրանքների խմբագրման, լեզվական և համատեքստային հարմարեցման, կոդավորողների վերահսկման և արդյունքների մեկնաբանման աշխատանքներին: | Ազգային մակարդակում ընտրանքի հետ կապված աշխատանքները վերահսկվում և ղեկավարվում են հմուտ և փորձառու տվյալների ղեկավարի կողմից: Ընտրանքի որոշման և վերջինիս գիտական մեթոդների օգտագործման ոլորտում փորձառություն ունենալը ցանկալի է: | Ուսումնասիրությունները և լոգիստիկայի հետ կապված աշխատանքները (այդ թվում՝ դպրոցական մակարդակի նյութերի մշակումը, դպրոցի հետ կապը և համակարգումը, գնահատման լոգիստիկան, թեստերի անցկացումը և վերապատրաստումը, ազգային չափանիշներով որակի մոնիթորինգը) կազմակերպվում և վերահսկվում են ուսումնասիրությունների և լոգիստիկայի հմուտ և փորձառու ղեկավարի կողմից: Անվտանգության և գաղտնիության պահանջների, ինչպես նաև համակարգչային տեխնիկայով աշխատելիս տեխնիկական միջոցների հետ վարվելու պահանջների մասին լավ տեղեկացված լինելը (եթե կիրառելի է) շատ կարևոր է: | Ազգային մակարդակի տվյալների հետ կապված աշխատանքները վերահսկվում և ղեկավարվում են հմուտ և փորձառու տվյալների ղեկավարի կողմից: Տվյալների կառավարման, տվյալների մշակման, քանակական տվյալների վերլուծության և վիճակագրական փաթեթներից (օրինակ՝ SPSS, SAS, STATA կամ R) օգտվելու փորձը ցանկալի է: | Կա տվյալների ավագ վերլուծաբան, ով ունի տվյալների քանակական վերլուծության և վիճակագրական տվյալների մշակման ծրագրային փաթեթների (օրինակ՝ SPSS, SAS, STATA կամ R) կիրառման համապատասխան հմտություններ և փորձառություն՝ ազգային մակարդակով տվյալների վերլուծության և զեկույցների ներկայացման հետ կապված հարցերով օգնելու համար: Նյութի Արձագանքի Տեսության և նյութերի վիճակագրության մեկնաբանության հետ ծանոթ լինելը ցանկալի է: Չափազանց կարևոր է գնահատման արդյունքների մեկնաբանման համար բարդ հետազոտական նախագծերում վիճակագրական ստանդարտ սխալների հաշվարկման մեթոդներին տիրապետելը: | Անձնակազմն ունի PISA-ի ՏՏ գործունեությամբ զբաղվող լրիվ դրույքով աշխատող ՏՏ համակարգող՝ երկրի/տնտեսական շրջանի դպրոցներում համակարգչային հետազոտություններ իրականացնելու համար (եթե այս տարբերակն ընդունված է): | Ազգային կենտրոնը երաշխավորում է, որ ծրագրի բոլոր փուլերում հասանելի կլինի որակավորված անձնակազմ՝ ՏՀԶԿ-ի և միջազգային պայմանագրերի կողմերի հարցումներին անգլերենով պատասխանելու համար: |

# Աշակերտների միջազգային գնահատման ծրագիր (PISA)

## Կարողությունների զարգացման ծրագիր - Հայաստան

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Աշակերտների միջազգային գնահատման ծրագիրը (PISA) չափում է 15 տարեկան աշակերտների՝ իրական կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիքներն ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում:

Հիմք ընդունելով PISA-ի կողմից նախկինում ներկայացված աջակցության ծրագրերի փորձը՝ PISA-2025 ստուգատեսը նոր մասնակիցներին առաջարկում է Կարողությունների զարգացման և դրանց կիրառման աջակցության (CBIS) հնարավորություն: CBIS-ը նպատակ ունի նոր մասնակիցներին անհատական և թիրախավորված աջակցություն ցուցաբերել PISA-2025 ստուգատեսը հաջողությամբ իրականացնելու համար:

CBIS-ի նախնական փուլում իրականացվում է կարողությունների կարիքների գնահատում՝ որոշելու համար PISA ստուգատեսն իրականացնելու մասնակցի կարողությունը: Հիմք ընդունելով գնահատման արդյունքում բացահայտված կարիքները՝ CBIS-ի մասնակիցների համար մշակվում է Կարողությունների զարգացման ծրագիր:

*Կարողությունների կարիքների գնահատման արդյունքներ. Հայաստանի* զեկույցն օգտագործվել է Հայաստանի համար կարողությունների զարգացման այս ծրագիրը մշակելու համար, որը կիրականացվի ՏՀԶԿ-ի, գործընկերների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հայաստանի Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից PISA-2025 ստուգատեսի ամբողջ ընթացքում:

Supported by the

Federal Ministry
for Economic Cooperation
and Development